ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՑՅԱԼ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ

# ՁԵՌՆԱՐԿ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2023-2024

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՁԵՎ

17 կամ ավելի ցածր տարիքի աշակերտների ծնողները և 18 և ավելի բարձր տարիքի չափահաս աշակերտները կարող են դիմել՝ սահմանափակելու աշակերտների տեղեկագրքի տվյալների հրապարակումը կամ ընդհանրապես չհրապարակել դրանք: Ըստ Կալիֆորնիայի կրթության մասին օրենքի բաժին 49073-ի՝ Շրջանն առանձնացրել է հետևյալը՝ որպես աշակերտի տեղեկագրքի տվյալներ, որը կարող է փոխանցվել լիազորված անհատներին, կազմակերպություններին և պաշտոնյաներին՝ անուն, հասցե, հեռախոսահամար, ծննդյան ամսաթիվ, դպրոց հաճախելու ամսաթվերը, ներկա և նախորդ վերջին դպրոց(ներ)ը, ստացած կոչումները, պատվոգրերը և մրցանակները: Օրենքը նախատեսում է նաև, որ 12-րդ դասարանի աշակերտների անունները, կոնտակտային տվյալները, աշակերտի ID-ն, դպրոցն ավարտելու ամսաթիվը և միջին որակական գնահատականները (GPA) հաղորդվեն՝ քոլեջի ֆինանսական օգնության հայտերի համար:

**Աշակերտների տեղեկագրքի տեղեկատվությունը սահմանափակելու կամ դրա հրապարակումը կանխելու խնդրանքը կիրառելի է միայն ընթացիկ ուսումնական տարվա համար և պետք է ներկայացվի տարեկան: Եթե ցանկանում եք սահմանափակել կամ կանխել աշակերտների տեղեկագրքի տեղեկատվության հրապարակումը, խնդրում ենք լրացնել և ստորագրել այս ձևը և պատճենը վերադարձնել դպրոցի տնօրենին մինչև <u>ուրբաթ, նոյեմբերի 17-ը</u>: Եթե այս ձևը լրացված չէ, ստորագրված չէ և վերադարձվում ձեր դպրոցի տնօրենին ձեր երեխայի տեղեկագրքի տեղեկատվությունը կարող է հրապարակվել դաշնային և նահանգային օրենքի համաձայն:**[1]

**ԴՊՐՈՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝** ______________________________ **ԱՄՍԱԹԻՎ՝** ____________________

| | | |
|---|---|---|
| ԱՇԱԿԵՐՏԻ ԱՆՈՒՆԸ՝(տպատառերով) | Ծնվել է՝ | Դասարան՝ |
| Հասցե՝ | Քաղաք՝ | |
| Ինդեքս՝ | Հեռախոս՝ | |

1. Խնդրում եմ չփոխանցել վերոնշյալ աշակերտի տեղեկագրքի տվյալները՝ ըստ ստորև իմ նշած վանդակ(ներ)ի՝

| **Ստորև նշված յուրաքանչյուր պաշտոնյայի կամ կազմակերպության համար խնդրում ենք վանդակում նշան դնել, եթե <u>ՉԵՔ</u> ցանկանում հրապարակել աշակերտի տեղեկագրքի տվյալները:**<br>*Եթե չեք ցանկանում, որ աշակերտի տեղեկագրքի որևէ տեղեկություն հաղորդվի լիազորված որևէ անհատի, կազմակերպության կամ պաշտոնյայի, ապա անցեք այս ձևաթղթի 5 –րդ կետին:* | **Աշակերտի տեղեկագրքի *ՈՉ ՄԻ* տվյալ ՉՀՐԱՊԱՐԱԿԵԼ** |
|---|---|
| Ընտրված պաշտոնյաներ | ☐ |
| Լոս Անջելեսի վարչաշրջանի երեխաների և ընտանեկան հարցերով ծառայությունների վարչություն | ☐ |
| Լոս Անջելեսի վարչաշրջանի առողջությանն առնչվող ծառայությունների վարչություն | ☐ |
| Լոս Անջելեսի վարչաշրջանի մտավոր առողջության վարչություն | ☐ |
| Լոս Անջելեսի վարչաշրջանի փորձարկման վարչություն | ☐ |
| Լոս Անջելեսի միացյալ շրջանի դպրոցում առողջապահական խնամք տրամադրողներ | ☐ |
| Երեխաների առողջության համար Լոս Անջելեսի միավորում | ☐ |
| Ծնող-ուսուցիչ-աշակերտ ասոցիացիա (PTSA) | ☐ |

*Շրջանն առանձնացրել է հետևյալը՝ որպես աշակերտի տեղեկագրքի տվյալներ.*

Անուն, հասցե, հեռախոսահամար, ծննդյան ամսաթիվ, դպրոց հաճախելու ամսաթվերը, ներկա և նախորդ վերջին դպրոց(ներ)ը, ստացած կոչումները, պատվոգրերը և մրցանակները

2. Հետևյալը կիրառելի է **միայն 1-ին դասարանի աշակերտների համար.**

   ☐ Ես **<u>չեմ</u>** ցանկանում հրապարակել վերոնշյալ աշակերտի անունը, ծննդյան ամսաթիվը, հասցեն, հեռախոսահամարը կամ աշակերտի ներկայիս դպրոցը L.A. City Housing + Community Investment Department (HCIDLA)-ին, որը ղեկավարում է Opportunity L.A.’s Children’s Savings Account նախաձեռնությունը *<u>անվճար</u>* կրթական խնայողական հաշիվ բացելու համար՝նախնական $ 50 ավանդով՝ LAUSD-ում գրանցված յուրաքանչյուր առաջին դասարանի սովորողի համար:

3. Հետևյալը կիրառելի է **միայն 11րդ և 12րդ դասարանի աշակերտների համար.**

   Ես **<u>չեմ</u>** ցանկանում հրապարակել վերոնշյալ աշակերտի անունը, հասցեն կամ հեռախոսահամարը ստորև իմ նշած վանդակների գործակալությանը կամ գործակալություններին՝

   ☐ Միացյալ Նահանգների Զինված ուժերի (Զինուժ) հավաքագրող գործակալություններ

   ☐ Քոլեջներ, համալսարաններ կամ այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ

4. Հետևյալը կիրառելի է **միայն 11րդ և 12րդ դասարանի աշակերտների համար**.

   ☐ Ես **<u>չեմ</u>** ցանկանում, որ վերը նշված աշակերտի կոնտակտային տվյալները և միջին գնահատականը (GPA) հաղորդվեն Կալիֆորնիայի՝ Աշակերտների օժանդակության հանձնաժողովին՝ նրա իրավասությունը Cal Grant-ի համար որոշելու նպատակով, որը ֆինանսական օգնության աղբյուր է, որի համար աշակերտը պարտավոր չէ հետ վճարել:

5. Հետևյալը կիրառելի է **ԲՈԼՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ** համար: Նշեք այս վանդակը, եթե չեք ցանկանում ոչ մի տեղեկության հրապարակում:

   ☐ Վերոնշյալ աշակերտի համար ես **<u>չեմ</u>** ցանկանում վերը նշված որևէ դասակարգի **որևէ** տեղեկություն հրապարակել **որևէ** անհատին, կազմակերպությանը կամ պաշտոնյային:

______________________________
**Ծնողի/օրինական խնամակալի ստորագրություն**
*(եթե աշակերտը 18 տ.-ից փոքր է)*

______________________________
**Ծնողի/օրինական խնամակալի ստորագրություն**
*(եթե աշակերտը 18 կամ ավելի բարձր տարիքի է)*

[1] Ըստ Դաշնային և Նահանգի օրենքների՝ դպրոցի շրջանները կարող են փոխանցել աշակերտի տեղեկագրքի տվյալները լիազորված անհատներին, կազմակերպություններին և (կամ) պաշտոնյաներին: